

ԳՐԱՎԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ (ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ)

Արթուր Ղափարյան

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի
տեսության և սահմանադրական իրավունքի
ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի պրոֆեսոր, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
DOI: 10.63925/18294847-2025.op20-04

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրվում է գրավի՝ որպես խափանման միջոցի իրավական
բնույթը: Գրավը գույքային բնույթի խափանման միջոց է, որն ապահովում է մեղադրյալի
օրինական վարքագիծը՝ տնտեսական (գույքային կորուստների սպառնալիք) և
բարոյահոգեբանական (գրավատուի նկատմամբ պատասխանատվություն)
մեխանիզմներով: Այն կարող է կիրառվել ցանկացած մեղադրյալի նկատմամբ, իսկ
գրավատու կարող են հանդես գալ ֆիզիկական/իրավաբանական անձինք՝
բացառությամբ պետական մարմինների, տուժողների կամ այլ մեղադրյալների: Գրավի
կիրառումը չի պահանջում մեղադրյալի համաձայնությունը, թեև գործնականում այն
քննարկվում է:

Գրավի չափը որոշվում է՝ հաշվի առնելով հանցանքի ծանրությունը և մեղադրյալի
գույքային դրությունը՝ պահպանելով համաչափության սկզբունքը: Գրավի առարկան
կարող է լինել դրամական միջոց, շարժական/անշարժ գույք, արժեթղթեր կամ այլ
արժեքներ, ընդ որում՝ անշարժ գույքի դեպքում պարտադիր է սեփականության
իրավունքի սահմանափակումների պետական գրանցումը:

Գրավի պայմանների խախտման դեպքում (փախուստ, վարույթին էական
խոչընդոտում) գրավը պետականացվում է, և կիրառվում է ավելի խիստ խափանման
միջոց:

Գրավի վերադարձը կատարվում է անհապաղ՝ քրեական հետապնդումը դադարեցնելիս, դատավճռի կայացմամբ կամ խափանման միջոցը փոխելիս:

Հիմնաբառեր: Գրավ, խափանման միջոց, համաչափության սկզբունք, մեղադրյալ, գրավատու, պետականացում, անմեղության կանխավարկած, սեփականության իրավունք:

1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Գրավը իրավասու մարմնի որոշմամբ սահմանված դրամական գումար է, որը մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու նպատակով շարժական գույքի, արժեթղթերի կամ այլ արժեքների ձևով պահատվության է փոխանցվում համապատասխան որոշմամբ նշված բանկի կամ այլ վարկային կազմակերպության դեպոզիտ, իսկ ՀՀ դրամի ձևով՝ մինչդատական վարույթի փուլում պահատվության է փոխանցվում դատախազության դեպոզիտային հաշվին, դատական վարույթի փուլում՝ դատարանի դեպոզիտային հաշվին»:

Գրավը գույքային բնույթի խափանման միջոց է, քանի որ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովվում է տնտեսական շարժառիթով՝ մեղադրյալը գիտակցում է ոչ օրինական վարքագիծ դրսևորելու դեպքում գրավի առարկան կորցնելու և նյութական վնասներ կրելու ռիսկը: Եթե գրավի առարկան մուծել են այլ անձինք, ապա գրավը ձեռք է բերում նաև բարոյահոգեբանական բնույթ, քանի որ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովվում է գրավատուի նկատմամբ մեղադրյալի պոզիտիվ պատասխանատվությամբ, ինչպես նաև գրավատուի առջև գույքային պատասխանատվություն կրելու ռիսկով:

Գույքային կորուստների սպառնալիքը կամ գրավատուի առջև գույքային և բարոյական պատասխանատվության վախն էական խթան են՝ մեղադրյալին հարկադրելու պահպանել խափանման միջոցի պայմանները:

Խափանման այս միջոցի կիրառմամբ պետությունը միջամտում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սեփականությունն իր

հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներին կամ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված իրավունքներին (գույքային իրավունքներին):

Գրավն *ընդհանուր* տեսակի խափանման միջոց է, քանի որ կարող է կիրառվել ցանկացած մեղադրյալի նկատմամբ: Գրավը՝ որպես խափանման միջոց, կիրառվում է մեղադրյալի նկատմամբ, սակայն գրավը կարող են մուծել նաև ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձինք (<< ՔրԴՕ 125-րդ հոդվածի 3-րդ մաս): Օրենքը չի նախատեսում, սակայն իրավունքի տրամաբանությունը հուշում է, որ գրավատու չեն կարող լինել գործով այլ մեղադրյալները, տուժողները:

<< ՔրԴՕ 125-րդ հոդվածի իմաստով պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավաբանական անձինք չեն և չեն կարող լինել գրավատու: Ենթադրվում է, որ գրավատու չեն կարող լինել նաև պետական կամ համայնքային կազմակերպությունները, որոնց հիմնադիրը կամ բաժնեմասերի սեփականատերը պետությունն է կամ տեղական ինքնակառավարման մարմինն է:

Եթե գրավը մուծում է այլ անձ, ապա նրան բացատրվում է մեղադրյալին ներկայացված մեղադրանքի էությունը, ինչպես նաև մեղադրյալի կողմից անօրինական վարքագիծ դրսևորելու դեպքում վրա հասնող հնարավոր հետևանքները (<< ՔրԴՕ 125-րդ հոդվածի 3-րդ մաս):

2. Գրավը մեղադրյալի համաձայնությամբ կիրառելու խնդիրը

Գործող օրենսդրությամբ գրավը՝ որպես խափանման միջոց կիրառելու համար մեղադրյալի համաձայնությունը չի պահանջվում, սակայն դոկտրինում և իրավակիրառ պրակտիկայում այս հարցի վերաբերյալ առկա է այլ մոտեցում:

Ռուսական դոկտրինում տարածում է ստացել այն մոտեցումը, որ գրավի կիրառումն ըստ էության զուգակցվում է երկկողմանի, իսկ որոշ դեպքերում՝ եռակողմ գործարքի կնքմամբ, գրավը համարում են մի կողմից՝ իրավասու մարմնի, մյուս կողմից՝ մեղադրյալի ու գրավատուի միջև կնքված յուրահատուկ համաձայնագիր (պայմանագիր): Նաև նշվում է, որ, ի տարբերություն մյուս խափանման միջոցների, օրինակ՝ կալանքի, որը կիրառվում է միակողմանի կարգով, գրավը՝ որպես խափանման միջոց, կիրառվում է կամավորության հիմունքներով³:

Գրավը մեղադրյալի միջնորդությամբ կիրառելը շատերը համարում են այս խափանման միջոցի կիրառման էությունը կազմող տարր, քանի որ դա կապում են գույքը տնօրինելու սեփականության իրավունքի հետ՝:

Գրավը որպես համաձայնագիր (պայմանագիր) ներկայացնելը կամ մեղադրյալի համաձայնությունը գրավի կիրառման պայման համարելը չի բխում քրեական դատավարության հանրայնության բնույթից և հակասում է քրեադատավարական հարկադրանքի էությանը: Գրավը չի կարող համարվել քրեադատավարական հարկադրանքի միջոց, եթե այն դիտարկվի որպես համաձայնագիր կամ կամավորության հիմունքներով կիրառվող միջոց:

Քրեադատավարական օրենսդրությամբ իրավասու մարմինն սկզբունքորեն կարող է առանց մեղադրյալի կամքը հաշվի առնելու կիրառել գրավ: Ավելին՝ եթե հետևենք օրենքի ձևակերպումներին, ապա իրավասու մարմնի՝ գրավ կիրառելու մասին որոշման հիման վրա գրավը մուծելը մեղադրյալի պարտականությունն է (տե՛ս ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 4-րդ և 4.1-րդ մասերի ձևակերպումը): Այլ բան է, որ այս հարկադրանքը կիրառելու դեպքում եթե մեղադրյալն ի սկզբանե հրաժարվում իր պարտականությունները կատարելուց, ապա այս խափանման միջոցի արդյունքայնությունը (ռեզուլտատիվությունը) ի սկզբանե կասկածելի է: Թերևս նույն տրամաբանությամբ՝ եթե մեղադրյալը միջնորդում է վերացնել գրավը՝ որպես խափանման միջոց, ապա այն պետք է բավարարել, հակառակ դեպքում՝ կասկածի տակ է դրվում այս խափանման միջոցի պիտանիությունը:

Գործնականում իրավիճակն այլ է. գրավը կիրառվում է այն մեղադրյալի նկատմամբ, ով նման միջնորդություն է ներկայացրել կամ վարույթն իրականացնող մարմնի հետ ոչ ֆորմալ բանակցությունների ժամանակ տվել է գրավ կիրառելու համաձայնություն: Եթե մեղադրյալն ի սկզբանե համաձայն չէ գրավ կիրառելուն կամ գրավի հնարավոր չափին, ապա քննիչը և դատախազը, գերադասելով գործնական ճկունությունը, խուսափում են գրավը կիրառելուց, քանի որ գրավի ընտրությունը որևէ գործնական արդյունք չի ունենա:

Այն, որ գործնականում գրավը կիրառվում է նախապես մեղադրյալի հետ քննարկելուց և համաձայնեցնելուց հետո, պայմանավորված է ոչ թե օրենսդրական պահանջով, այլ բացառապես գործնական շարժառիթով: Գործնականում ճկուն քննիչը և դատախազը

խուսափում են ընտրել խափանման այնպիսի միջոց, որը մեղադրյալի կամքի բացակայության պայմաններում փաստացի չի կարող կիրառվել (արդյունք տալ): Սակայն այս պրակտիկան չի փոխում գրավի՝ որպես խափանման միջոցի էությունը և գրավը չի դարձնում կամավորության հիմունքներով կիրառվող միջոց:

Գրավը կիրառված է համարվում գրավի մուծված լինելը հավաստող փաստաթուղթը վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու պահից (<< ՔրԴՕ 125-րդ հոդվածի 4-րդ մաս): Եթե մեղադրյալը եռօրյա ժամկետում չի ներկայացնում գրավի մուծված լինելը հավաստող փաստաթուղթը, ապա *a contrario* (հակառակից) տրամաբանությամբ կարելի է ասել, որ գրավը համարվում է չկիրառված: Գրավը կիրառված/չկիրառված համարելու մասին կարգավորումն իրավական ֆիկցիա է, քանի որ գրավը՝ որպես խափանման միջոց, իրականում կիրառվում և ուժի մեջ է մտնում իրավասու մարմնի որոշումը կայացնելու և այն դատախազի կողմից հաստատելու պահից, պարզապես օրենսդիրը համարում է, որ այն չի կիրառվել, եթե մեղադրյալը գրավը չի մուծել: Գրավը մուծված լինելու պահից այն կիրառված համարելու ֆիկցիան առաջացնում է երկու հետևանք:

Նախ՝ այս ֆիկցիայի պարագայում գրավը չմուծելը չի կարող որակվել որպես խափանման միջոցի պայմանների խախտում (գրավը համարվում է չկիրառված), ուստի նման իրավիճակում << ՔրԴՕ 117-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում կիրառվում է այլ՝ առավել պիտանի խափանման միջոց, կիրառելի չէ: Ճիշտ է, գրավը չմուծելու դեպքում քննարկվում է մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի այլ տեսակ ընտրելու հարցը, սակայն դա տեղի է ունենում ընդհանուր կարգով, ոչ թե խափանման միջոցը խախտելու հիմնավորմամբ:

Երկրորդ՝ եթե գրավը մուծված չլինելու դեպքում համարվում է, որ գրավը չի կիրառվել, ապա գրավը՝ որպես խափանման միջոց, փոխելու կամ այն վերացնելու անհրաժեշտությունը վերանում է: Այսինքն՝ իրավասու մարմինն այլ տեսակի խափանման միջոց կիրառելիս գրավը փոխելու կամ վերացնելու մասին առանձին որոշում չի կայացնում, քանի որ գրավը համարվում է չկիրառված:

3. Գրավի չափը որոշելը և գրավի առարկան

Գրավի չափը որոշելիս հաշվի են առնվում մեղադրյալին վերագրվող հանցանքի ծանրության աստիճանը և մեղադրյալի գույքային դրությունը (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 2-րդ մաս):

Գրավի չափը որոշելիս պետք է իրավական քաղաքականությունը լինի այնպիսին, որ գրավը չվերաձվի մեծահարուստների արտոնության: Գրավ պետք է սահմանել այնպիսի չափով, որ մի կողմից՝ այն պիտանի լինի ապահովելու մեղադրյալի օրինական վարքագիծը, մյուս կողմից՝ այն մուծելը լինի մեղադրյալի հնարավորությունների սահմաններում: Բացի այդ, իրավակիրառողը գրավը չպետք է ընկալի որպես ամենախիստ խափանման միջոցից՝ կալանքից ազատելու փրկագին⁵: Եթե իրավակիրառողը գրավի նկատմամբ ունենա նման հոգեբանական վերաբերմունք, ապա կսահմանի անհամաչափ բարձր գրավ:

Այն իրավիճակներում, երբ առկա է գրավը չմուծելու դեպքում մեղադրյալի նկատմամբ ազատությունից զրկելու վերաբերյալ խափանման միջոց կիրառելու ռիսկ, ապա իրավասու մարմինները պարտավոր են գրավի չափը որոշելիս ցուցաբերել նույն մանրակրկիտ վերաբերմունքը, ինչ որ ցուցաբերվում է կալանք կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

Եվրոպական դատարանը նշում է, որ գրավի չափը պետք է գնահատվի՝ առաջին հերթին հաշվի առնելով մեղադրյալի անձը և նրա գույքային դրույթը, սակայն որոշակի հանգամանքներում անհիմն չէ նաև հաշվի առնել նրան վերագրվող վնասի ծավալը (տե՛ս Մուսա ընդդեմ Ֆրանսիայի (*Moussa v. France*), գործով 21.05.1997թ. վճիռը): Օրինակ՝ Մանգուրասն ընդդեմ Իսպանիայի (*Mangouras v. Spain*, 28.09.2010 թ.) գործով նավթատար նավը խորտակվել է Իսպանիայի Գալիսիայի ափերի մոտ՝ առաջացնելով Եվրոպայում տեղի ունեցած ամենամեծ էկոլոգիական աղետներից մեկը: Իսպանական ազգային դատարանը կալանքից ազատելու համար սահմանել էր 3.000.000 եվրոյի չափով գրավ: Գումարի չափը հիմնականում պայմանավորված էր էկոլոգիական վնասի բացառիկ մասշտաբով և ծավալներով (աղտոտվել էր 2,900 կմ ափագիծ): Թեև այս դեպքում հանցագործությամբ պատճառված վնասը գրավի չափը որոշելիս ունեցել է կարևոր նշանակություն, սակայն Եվրոպական դատարանը խախտում չի հաստատել:

Մինչդեռ, Իստոմինան ընդդեմ Ուկրաինայի (*Istomina v. Ukraine*, 13.01.2022թ.) գործով Եվրոպական դատարանը խախտում է արձանագրել, քանի որ հարկային հանցագործության գործերով գրավի չափը 125 անգամ գերազանցել է տվյալ հանցատեսակների համար օրենքով սահմանված գրավի առավելագույն չափը: Դատարանը նշել է, որ նման բարձր գրավի չափ սահմանելու հիմքում դրվել է միայն հանցագործությամբ պատճառված վնասը:

Մեղադրյալին ներկայացված մեղադրանքների ծանրությունը չի կարող համարվել գրավի բարձր չափ սահմանելու միակ հիմքը (տե՛ս Եվրոպական դատարանի Քրիստովան ընդդեմ Բուլղարիայի (*Hristova v. Bulgaria*) գործով 07.12.2006թ. վճիռը):

Տեսության մեջ նշվում է, որ գրավի չափը որոշելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, թե գրավ դնելուց հետո մեղադրյալն արդյո՞ք ունի բավարար միջոցներ իր և իր խնամքի ներքո գտնվող անձանց կենսական շահերն ապահովելու համար⁶:

Գրավը՝ որպես խափանման միջոց, կարող է սահմանվել միայն դրամական միավորի ձևով, սակայն գրավը՝ որպես սահմանված դրամական միջոց, պետք է տարբերակել գրավի առարկայից: Գրավի առարկա կարող են լինել ինչպես դրամական միջոցը, այնպես էլ շարժական կամ անշարժ գույքը, արժեթղթերը կամ այլ արժեքները:

Եթե գրավի առարկան շարժական կամ անշարժ գույք է, արժեթուղթ է, ապա գրավի արժեքի ապացուցման պարտականությունը կրում է գրավատուն (<< ՔրԴՕ 125-րդ հոդվածի 2-րդ մաս): Անձնագիրը չի կարող հանդիսանալ գրավի առարկա («Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մաս):

Ընդ որում՝ հնարավոր է այնպիսի իրավիճակ, որ գրավի առարկայի արժեքը գերազանցի իրավասու մարմնի որոշմամբ սահմանված դրամական գումարի չափը: Օրինակ՝ իրավասու մարմնի որոշմամբ որպես գրավ սահմանվել է 5 միլիոն դրամ, սակայն գրավ դրվող անշարժ գույքի արժեքը 15 միլիոն դրամ է: ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված է, որ եթե որպես գրավ ընդունվել է անշարժ կամ շարժական գույք, ապա խափանման միջոցի պայմանները խախտելու հիմքով այդ գույքի վաճառքից մնացած գումարի այն մասը, որը գերազանցում է գրավի չափը, ենթակա է վերադարձման:

Գրավ կիրառելու դեպքում գրավի առարկան, որպես կանոն, դուրս է գալիս սեփականատիրոջ տիրապետությունից և սահմանափակվում են այն տնօրինելու կամ օգտագործելու իրավունքները: Սակայն պետք է տարբերակել գրավի առարկա ՀՀ դրամի, շարժական գույքի, այդ թվում՝ արժեթղթերի և անշարժ գույքի պահպանության ռեժիմները:

Եթե գրավի առարկան ՀՀ դրամն է, ապա այն մինչդատական վարույթի փուլում պահատվության է փոխանցվում դատախազության դեպոզիտային հաշվին, դատական վարույթի փուլում՝ դատարանի դեպոզիտային հաշվին:

Եթե գրավի առարկան շարժական գույք է, արժեթղթեր կամ այլ արժեքներ են, ապա դրանք պահատվության է փոխանցվում համապատասխան որոշմամբ նշված բանկի կամ այլ վարկային կազմակերպության դեպոզիտ:

Անշարժ գույքը կարող է հանդիսանալ գրավի առարկա, եթե գրավ կիրառելու մասին որոշմամբ հատուկ նշվել է դրա հնարավորության մասին (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 1-ին մաս): Դատավարական օրենքում նախատեսված չէ անշարժ գույքի՝ որպես գրավի առարկայի գրավադրման դեպքում այդ գույքի տնօրինման իրավազորության նկատմամբ սահմանափակումները գրանցելու մասին հատուկ նորմ: Այս պարագայում կարող են կիրառվել անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումների գրանցման վերաբերյալ ընդհանուր կարգավորումները: Այսպես, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սահմանափակումների պետական գրանցման համար հիմք են նախաքննություն իրականացնող մարմինների, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմինների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կայացված որոշումները: Եթե իրավասու մարմինը որոշմամբ հնարավոր է համարել գրավի առարկա ընդունել անշարժ գույքը, և մեղադրյալը կամ գրավատուն նախընտրել են գրավ դնել անշարժ գույքը, ապա պետք է գրավ կիրառելու մասին իրավասու մարմնի՝ գրավի առարկա անշարժ գույքի տնօրինման իրավազորությունը սահմանափակելու մասին որոշումը և այլ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնեն ՀՀ կադաստրի կոմիտե:

Անշարժ գույքը որպես գրավի առարկա ընդունելը թեև առաջացնում է որոշակի կազմակերպական բարդություններ, սակայն այն ունի իր դրական կողմերը, քանի որ

մեղադրյալը, որը չունի բավարար դրամական միջոցներ, անշարժ գույքը գրավ դնելով կարող է շարունակել օգտագործել այդ գույքը (բնակվել բնակարանում, հանձնել վարձակալության և այլն):

ՔրԴՕ-ում թեև նշված չէ, սակայն ենթադրվում է, որ գրավի առարկա չի կարող լինել այնպիսի գույք, որի վրա, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն, բռնագանձում չի կարող տարածվել: Օրինակ՝ ըստ նշված օրենքի՝ բռնագանձում չի կարող տարածվել հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հատուկ, ինչպես նաև նրանց հնարավորություններին հարմարեցված փոխադրամիջոցների, աջակցող միջոցների վրա: Թեև դոկտրինում նշվում է, որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապացուցման ընդհանուր կանոնների հիման վրա պարզել գրավի առարկայի ծագման օրինականությունը⁷, սակայն նման առաջարկի իրագործման դեպքում վարույթն իրականացնող մարմինն ակնհայտորեն դուրս կգա քրեական դատավարության սահմաններից: Ավելին, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում ո՛չ գրավատուն, ո՛չ էլ իրավասու մարմինը գույքի ծագման օրինականությունն ապացուցելու կամ այն ստուգելու պարտականություն չունեն: Այնուամենայնիվ, եթե իրավասու մարմինն ունի գրավի առարկայի ծագման օրինականության մասին առերևույթ կասկածներ, ապա պարտավոր է քննարկել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին ՀՀ օրենքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումները գործի դնելու հարցը:

4. Գրավի կիրառման իրավաչափությունը

Գրավը որպես խափանման միջոց, կարող է կիրառվել, եթե առկա է մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկած (ՀՀ ՔրԴՕ 116-րդ հոդվածի 1-ին մաս):

Գրավը կարող է կիրառվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է դրսևորել ոչ օրինական վարքագիծ, մասնավորապես՝ կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնի հրավերով կամ խոչընդոտել է վարույթին:

Գրավը կոչված է ապահովելու մեղադրյալի օրինական վարքագիծը (<< ՔրԴՕ 125-րդ հոդվածի 1-ին մաս): Մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու նպատակը ձևակերպված է լայն, սակայն այն պետք է մեկնաբանել << ՔրԴՕ 116-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում, այսինքն՝ այս խափանման միջոցի նպատակն է որպեսզի մեղադրյալը չդիմի փախուստի, չկատարի նոր հանցանք կամ կատարի օրենքով կամ դատարանի որոշմամբ իր վրա դրված պարտականությունը:

Գրավը՝ որպես խափանման միջոց, ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարութային հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու նպատակ չի հետապնդում: Այս նպատակների համար պետք է կիրառել մեկ այլ հարկադրանքի միջոց՝ գույքի արգելադրումը:

Գրավը՝ որպես խափանման միջոց, իրավասու են կիրառել՝

1) դատախազի համաձայնությամբ՝ քննիչը մինչև մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ միասին դատախազին հանձնելը.

2) հսկող դատախազը՝ մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ միասին քննիչից ստանալու պահից, մինչև դրանք դատարան հանձնելը.

3) դատարանը՝ հետևյալ երկու վարույթներում.

ա) մինչդատական վարույթում՝ խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը լուծելիս: Այս փուլում դատարանը գրավ կարող է կիրառել միայն տնային կալանքի կամ վարչական հսկողության հետ համակցված.

բ) դատական վարույթում:

5. Գրավի պայմանները խախտելը և դրա իրավական հետևանքները

Գրավի պայմանների խախտումը կարող է առաջացնել երկու հետևանք՝

1) առավել պիտանի (խիստ) խափանման միջոց կիրառելը (<< ՔրԴՕ 117-րդ հոդվածի 3-րդ մաս).

2) իրավասու մարմնի որոշմամբ գրավը (գրավի առարկան) պետության եկամուտ դարձնելը (<< ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մաս):

Օրենսդիրը հստակեցրել է գրավի պայմանների այն խախտումները, որոնց հետևանքով գրավը դառնում է պետության եկամուտ (գրավը պետականացվում է):
Դրանք են՝

- 1) մեղադրյալը թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից.
- 2) պարբերաբար չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնի հրավերով.
- 3) էապես խոչընդոտել է վարույթին (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մաս):

Նկատի ունենալով, որ գրավի պայմանների նման խախտումների դեպքում գրավի առարկայի (գրավի) պետականացումն ինտենսիվ միջամտություն է անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքին (ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ/0043/01/21 գործով 28.11.2024թ. որոշումը), օրենսդիրը, ելնելով համաչափության սահմանադրական սկզբունքից, գրավի պայմանների խախտում է համարել ոչ թե վարույթն իրականացնող մարմնի կանչով մեկ անգամ չներկայանալը, այլ պարբերաբար չներկայանալը կամ ոչ թե պարզապես խոչընդոտելը, այլ էապես խոչընդոտելը:

Եթե մեղադրյալը թույլ է տվել գրավի պայմանների՝ վերը նշված էական խախտումները, ապա դրա արդյունքում կիրառվում է առավել խիստ (պիտանի) խափանման միջոց, և գրավը պետականացվում է: Իսկ եթե գրավի պայմանների խախտումներն էական չեն, օրինակ՝ վարույթն իրականացնող մարմնի հրավերով չներկայանալը պարբերաբար չէ, ապա այս դեպքում պետք է քննարկել միայն առավել պիտանի խափանման միջոց կիրառելու հարցը:

Իրավասու մարմինը պետք է համակողմանի ուսումնասիրի գրավի պայմանները խախտելու բոլոր հանգամանքները: Պետք է պարզել՝ արդյոք մեղադրյալը թաքնվում է, թե՞ գտնվում է գործուղման մեջ, կամ վարույթն իրականացնող մարմնի կանչով պարբերաբար չներկայանալու պատճառները: Վարույթին էապես խոչընդոտելու, մասնավորապես՝ ապացուցման գործընթացին էապես ապօրինի միջամտելու հանգամանքը գնահատելիս պետք է հաշվի առնել մեղադրյալի գործողությունների ինտենսիվությունը, պարբերականությունը, ինչպես նաև փաստական տվյալի ապացուցողական նշանակությունը, որի բովանդակության վրա մեղադրյալն ազդել է:

Ի տարբերություն նախորդ օրենսդրության՝ ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մասում մեղադրյալի կողմից մեկ այլ հանցանք կատարելն ինքնին գրավը պետության եկամուտ

դարձնելու հիմք չէ, սակայն ապացուցման գործընթացին էապես ապօրինի միջամտելը (վարույթին էապես խոչընդոտելը) կարող է պարունակել հանցագործության հատկանիշներ: Օրինակ՝ քրեական վարույթով ապացույց, դատավարական փաստաթուղթ կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույց ներկայացնելը (<< ՔրՕ 479-րդ հոդված), կամ դատավարության մասնակիցների լիազորությունների իրականացումը խոչընդոտելը (<< ՔրՕ 495-րդ հոդված) համարվում են հանցագործություններ: Հանցագործությամբ ապացուցման գործընթացին միջամտելը գրավի համատեքստում, անկասկած, համարվում է վարույթին էապես միջամտելու եղանակ: Ենթադրենք, կոնկրետ վարույթով (առաջին վարույթ) մեղադրյալը հանցավոր եղանակով խոչընդոտել է վարույթին, որի կապակցությամբ նախաձեռնվել է քրեական վարույթ (երկրորդ վարույթ): Առաջին վարույթով հսկող դատախազը կամ դատարանն արդյո՞ք իրավասու են մինչև երկրորդ վարույթով դատավճռի կայացումը հաստատված համարել, որ մեղադրյալը վարույթին էապես խոչընդոտելու եղանակով խախտել է գրավի պայմանները, և որոշում կայացնեն գրավը պետության եկամուտ դարձնելու մասին: Պատասխանը բացասական է: Առաջին վարույթով հսկող դատախազը կամ մեղադրանքը քննող դատարանը, անմեղության կանխավարկածի պահանջով, իրավասու չեն, մինչև երկրորդ վարույթով մեղադրյալի կողմից հանցավոր եղանակով առաջին վարույթին խոչընդոտելու փաստը դատավճռով հաստատվելը գրավը պետության եկամուտ դարձնել: Նկարագրված իրավիճակում, երբ վարույթին հանցավոր ճանապարհով խոչընդոտելու փաստով առկա է քրեական վարույթ, որը դեռևս ավարտված չէ, անմեղության կանխավարկածն արգելում է առաջին վարույթով հաստատված համարել այդ փաստը և մարդուն զրկել սեփականության իրավունքից:

Համանման իրավիճակի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՍԴ/0043/01/21 գործով 28.11.2024 թ. որոշմամբ նշել է.

«Գրավը պետության եկամուտ դարձնելու համատեքստում դատարանի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու հանգամանքը կարող է ապացուցված համարվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, իսկ քրեական գործի քննության փուլում գրավը պետության եկամուտ դարձնելու հարցը

ենթակա է լուծման վերջնական դատական ակտով, հակառակ պարագայում վարույթն իրականացնող մարմնի, տվյալ դեպքում՝ դատարանի գործողություններն ինքնին կհանգեցնեն անձի անմեղության կանխավարկածի խախտման»:

Նմանատիպ իրավիճակում առաջին վարույթով անմեղության կանխավարկածի խախտումից խուսափելու համար իրավասու մարմինը գրավի պայմանները խախտելու երկու հետևանքներից պետք է կիրառի միայն մեկը՝ միջոցներ ձեռնարկի առավել պիտանի խափանման միջոց կիրառելու համար (ՀՀ ՔրԴՕ 117-րդ հոդվածի 3-րդ մաս):

Մինչդատական վարույթում գրավը պետականացնելու որոշումը կայացնում է հսկող դատախազը⁸: Նա որոշման պատճենը եռօրյա ժամկետում ուղարկում է մեղադրյալին և գրավը մուծած անձին՝ նրանց պարզաբանելով այդ որոշման բողոքարկման՝ ՀՀ ՔրԴՕ սահմանված կարգը (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մաս): Դատական վարույթում գրավը պետության եկամուտ դարձնելու մասին որոշումը կայացնում է դատարանը (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 6-րդ մաս): Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի և դատարանի որոշումները ենթակա են հարկադիր կատարման («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 13-րդ կետեր):

6. Գրավը վերադարձնելը

Գրավը վերադարձվում է գրավատուին բոլոր դեպքերում, երբ չեն ապացուցվել ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խախտումները, կամ գրավը որպես խափանման միջոց վերացվել կամ փոխվել է (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 7-րդ մաս):

6.1. Գրավը վերադարձնելը՝ խախտումներն ապացուցված չլինելու հիմքով: Գրավը վերադարձնելու առաջին հիմքը վերաբերում է այն իրավիճակներին, երբ գրավը պետականացնելու մասին հսկող դատախազի կամ դատարանի որոշումը բողոքարկվում է, որի արդյունքում դատարանը փաստում է, որ գրավի պայմանների խախտումներն ապացուցված չեն: Գրավը վերադարձնելու այս հիմքի վերաբերյալ առկա է երկու նկատառում:

1) Եթե ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խախտումները չեն ապացուցվում, ապա գրավը գրավատուին վերադարձնելուց զատ, պետք է նաև քննարկել գրավի պայմանները խախտելու հիմքով կիրառված առավել պիտանի (խիստ)

խափանման միջոցը փոփոխելու և ավելի մեղմ խափանման միջոց կիրառելու հարցը: Կախված նրանից, թե գրավը պետականացնելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքում դատարանն ինչ փաստեր է հաստատված համարում, հնարավոր է երկու տարբերակ:

Տարբերակ առաջին՝ եթե դատարանը հաստատում է, որ գրավի պայմանները խախտվել են, սակայն դրանք էական չեն (քննիչի կամ դատարանի հրավերով չներկայանալը չի եղել *պարբերաբար*, կամ վարույթին խոչընդոտելը չի եղել *էապես*), ապա պետականացված գրավը վերադարձվում է գրավատուին, սակայն գրավի փոխարեն կիրառված խիստ խափանման միջոցը կարող է մնալ անփոփոխ, քանի որ գրավի պայմանների խախտման փաստը, այնուամենայնիվ, հաստատված է, պարզապես դրանք գրավը պետականացնելու համար անհրաժեշտ էական խախտումները չեն:

Տարբերակ երկրորդ՝ եթե դատարանը հաստատում է, որ գրավի պայմանները չեն խախտվել, ապա նման որոշումն ուղղակի հիմք է գրավը գրավատուին վերադարձնելու համար և գործուն ազդակ է վերանայելու խափանման միջոցի պայմանները խախտելու հիմքով գրավն առավել խիստ խափանման միջոցով փոխարինելու դիրքորոշումը վերանայելու համար:

2) ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 7-րդ մասի տառացի ձևակերպումից ստացվում է այնպես, որ գրավը վերադարձվում է, եթե չեն ապացուցվել գրավի պետականացման համար հիմք հանդիսացած խախտումները, մինչդեռ գրավը պետականացնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել նաև ձևական (ընթացակարգային) բնույթի խախտումների հիմքով. օրինակ՝ գրավը պետականացնելու մասին որոշումը բողոքարկվել է այն հիմքով, որ այդ որոշումը կայացրել է տվյալ գործով իրավասություն չունեցող դատախազը: Եթե դատարանը ՀՀ ՔրԴՕ 300-րդ հոդվածի կարգով բողոքը քննելու արդյունքում հաստատում է ընթացակարգային խախտման փաստը, արդյո՞ք դա ինքնին նշանակում է, որ այդ դատական ակտի հիման վրա գրավը ենթակա է վերադարձման: Ըստ գործող օրենսդրության՝ այս հարցին դրական պատասխան տալը հնարավոր չէ, քանի որ՝ 1) պետականացված գրավը վերադարձնելու ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 7-րդ մասում նախատեսված հիմքերի ցանկում ընթացակարգային խախտումը նշված չէ, 2) դատարանը մինչդատական ակտերի իրավաչափության դատական

երաշխիքների վարույթով բողոքարկվող որոշումը վերացնելու լիազորություն չունի: Դատարանը բողոքը բավարարելու դեպքում վարույթի հանրային մասնակցի վրա դնում է անձի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված կոնկրետ վարույթային ակտեր կայացնելու (կատարելու) պարտականություն (ՀՀ ՔրԴՕ 304-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այս երկու գործոնները հիմք են տալիս պնդելու, որ եթե դատարանը հաստատում է գրավը պետականացնելու ժամանակ թույլ տրված ընթացակարգային խախտումը, ապա դա պետականացված գրավը վերադարձնելու անմիջական հիմք չէ: Սակայն դա չի նշանակում, որ դատարանի հաստատած ընթացակարգային խախտումը պետք է մնա անհետևանք: Բողոքը բավարարելու որոշմամբ դատարանը վերադաս դատախազի վրա դնում է ոչ իրավասու դատախազի կողմից գրավը պետականացնելու խախտումը վերացնելու պարտականություն, որի սահմաններում վերադաս դատախազը պետք է վերացնի գրավը պետականացնելու մասին ոչ իրավասու դատախազի որոշումը, որից հետո գրավն անհապաղ պետք է վերադարձվի սեփականատիրոջը, քանի որ գրավը պետականացնելու մասին որոշումն իրավաբանորեն գոյություն չունի, ուստի այն այլևս չի կարող առաջացնել որևէ իրավական և փաստական հետևանք:

6.2. Գրավը վերադարձնելը՝ խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու հիմքով: Գրավը վերադարձնելու երկրորդ հիմքը վերաբերում է գրավը որպես խափանման միջոց վերացնելուն կամ փոխելուն: Գրավը՝ որպես խափանման միջոց, կարող է վերացվել և փոխվել երկու ռեժիմով: Առաջինը՝ ՀՀ ՔրԴՕ 117-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու ռեժիմն է, երբ խափանման միջոցի գործողության ընթացքում վերացել կամ փոխվել են գրավի իրավաչափության պայմանները, և վարույթն իրականացնող մարմինն իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում գրավը փոխելու կամ վերացնելու մասին: Երկրորդը՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ դատավճիռ կայացնելու դեպքում խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու ռեժիմն է, երբ իրավասու մարմինը, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ դատավճիռ կայացնելով, գրավը վերացնում է կամ փոխում է (ՀՀ ՔրԴՕ 196-րդ հոդվածի 4-րդ մաս, 348-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ):

Եթե գրավի պայմանները չեն խախտվել, ապա քրեական հետապնդումը դադարեցնելու կամ դատավճիռ կայացնելու դեպքում գրավը ենթակա է վերադարձման՝

անկախ նրանից քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացնող, թե ոչ արդարացնող հիմքով, կամ կայացվել է մեղադրական, թե արդարացման դատավճիռ:

Գրավի առարկան այլ նպատակներով, օրինակ՝ գույքային հայցը վճարելու կամ վարութային ծախսերը հատուցելու նպատակով, չեն կարող օգտագործվել, քանի որ դրա համար օրենսդրական հիմքեր նախատեսված չեն:

6.3. Գրավը վերադարձնելու անհապաղությունը: Գրավը վերադարձնելու մասին որոշումն ընդունվում է համապատասխան խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ (<< ՔրԴՕ 125-րդ հոդվածի 7-րդ մաս): Օրենքը հստակ չի սահմանել գրավի առարկան փաստացի վերադարձնելու ժամկետ, սակայն՝ նկատի ունենալով, որ գրավը՝ որպես խափանման միջոց, սահմանափակում է գրավատուի սեփականության իրավունքը, ուստի գրավը՝ որպես խափանման միջոց, վերացնելիս կամ փոխելիս գրավի առարկան պետք է վերադարձնել անհապաղ՝ անկախ նրանից, թե խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու մասին որոշումն օրինական ուժի մեջ մտել է, թե ոչ, կամ այն բողոքարկվել է, թե ոչ:

Քրեական հետապնդումը դադարեցնելու կամ դատավճիռ կայացնելու, կամ գրավը՝ որպես խափանման միջոց, այլ ռեժիմով վերացնելու փաստով, անկախ այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքից, գրավի առարկան պահելու իրավաչափ հիմքերը վերանում են:

Գրավը՝ որպես խափանման միջոց, վերացնելու կամ փոխելու դեպքում գրավի առարկան անհապաղ վերադարձնելու իրավիճակը նման է արդարացման վերդիկտ կայացնելու դեպքում կալանավորված մեղադրյալին դատական նիստերի դահլիճից անհապաղ ազատելուն, իսկ մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում՝ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելուն, կիրառված խափանման միջոցը փոխելուն կամ անփոփոխ թողնելուն (<< ՔրԴՕ 344-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր):

Եվրոպական դատարանը Կասիլովն ընդդեմ Ռուսաստանի (*Kasilov v. Russia*, 06.07.2021) գործով մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելուց և նրան նիստերի դահլիճում ազատությունից զրկելուց հետո գրավն անհապաղ չվերադարձնելը (դատավճիռը կայացնելուց մոտ մեկ տարի անց վերադարձնելը) համարել է սեփականության իրավունքի խախտում: Ներպետական դատարանները դիմողի գրավը չեն վերադարձրել՝ դատավճռի օրինական ուժի մեջ

մտած չլինելու հիմքով, մինչդեռ մեղադրյալի նկատմամբ գրավը կալանքով փոխարինելու և նրան ազատությունից զրկելու պահից գրավն անհապաղ չվերադարձնելը չի հետապնդել որևէ իրավաչափ նպատակ:

7. Եզրահանգումներ

Գրավն ապահովում է մեղադրյալի օրինական վարքագիծը՝ գույքային ռիսկերի և բարոյական պատասխանատվության միջոցով: Գրավը կարող է կիրառվել՝ առանց մեղադրյալի համաձայնության, բայց գործնականում նման համաձայնությունը քննարկվում է՝ ելնելով զուտ պրագմատիկ նկատառումներից:

Գրավատու չեն կարող լինել պետական մարմիններ, կազմակերպություններ կամ գործի այլ մասնակիցներ:

Գրավի պետականացումը թույլատրվում է միայն էական խախտումների դեպքում (փախուստ, վարույթին էական խոչընդոտում): Հանցագործություն կատարելն ինքնին գրավի պետականացնելու հիմք չէ:

Գրավը վերադարձվում է անհապաղ՝ խափանման միջոցի վերացման կամ փոփոխության պահին՝ անկախ համապատասխան ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց:

Գրավի առարկան որպես հայցի կամ ծախսերի հատուցման միջոց օգտագործելն արգելված է:

Գրավի առարկայի ծագման օրինականությունն ստուգելը վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը չէ:

ЗАЛОГ КАК МЕРА ПРЕСЕЧЕНИЯ (ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ)

АРТУР СИРЕКАНОВИЧ ГАМБАРЯН

Доктор юридических наук, профессор,
заведующий кафедрой теории права и конституционного
права Российско-Армянского (Славянского) Университета,
профессор Академии государственного управления Республики
Армения, заслуженный юрист Республики Армения

Аннотация В статье исследуется правовая природа залога как меры пресечения. Залог является мерой пресечения имущественного характера, обеспечивающей правомерное поведение обвиняемого посредством экономических (угроза имущественных потерь) и

морально-психологических (ответственность перед залогодателем) механизмов. Он может применяться в отношении любого обвиняемого, а в качестве залогодателя могут выступать физические/юридические лица, за исключением государственных органов, потерпевших или других обвиняемых.

Применение залога не требует согласия обвиняемого, хотя на практике оно обсуждается.

Размер залога определяется с учетом тяжести преступления и имущественного положения обвиняемого при соблюдении принципа пропорциональности. Предметом залога могут быть денежные средства, движимое/недвижимое имущество, ценные бумаги или иные ценности, причем для недвижимости обязательна государственная регистрация ограничений права собственности.

В случае нарушения условий (побег, существенное препятствование производству) залог конфискуется в доход государства, и применяется более строгая мера пресечения. Возврат залога осуществляется немедленно при прекращении уголовного преследования, вынесении приговора или изменении меры пресечения.

Ключевые слова: Залог, мера пресечения, принцип пропорциональности, обвиняемый, залогодатель, конфискация, презумпция невиновности, право собственности.

BAIL AS A PREVENTIVE MEASURE (APPLICATION ISSUES)

ARTUR SIREKAN GHAMBARYAN

Doctor of Juridical Sciences, Professor, Chairman
of the Department of Theory of Law and Constitutional
Law of Russian-Armenian University, Full Professor of
the State Administration Academy of the Republic of Armenia,
Honored Lawyer of the Republic of Armenia

Abstract

The article examines the legal nature of bail as a preventive measure. Bail is a property-based preventive measure that ensures the accused's lawful behavior through economic (threat of property losses) and moral-psychological (responsibility to the pledgor) mechanisms. It may be applied to any accused, and pledgors may include individuals/legal entities, excluding state bodies, victims, or other accused persons.

The application of bail does not require the accused's consent, though it is negotiated in practice.

The bail amount is determined by considering the gravity of the crime and the accused's financial status, adhering to the principle of proportionality. Bail collateral may include cash, movable/immovable property, securities, or other valuables, with state registration of property rights restrictions mandatory for immovable assets.

If conditions are violated (absconding, substantial obstruction of proceedings), the bail is confiscated by the state, and a stricter preventive measure is applied. Bail is refunded immediately upon termination of criminal prosecution, conviction, or modification of the preventive measure.

Keywords: Bail, preventive measure, principle of proportionality, accused, pledgor, confiscation, presumption of innocence, property rights.

Գրականության ցանկ

Капинус Н.И. Процессуальные гарантии прав личности при применении мер пресечения в уголовном процессе: монография. М.: Изд. Буквост, 2007. 416 с.

Михайлов В.А. Уголовно-процессуальные меры пресечения в судопроизводстве Российской Федерации. М., 1997. 304 с.

Меры процессуального принуждения в досудебном производстве по уголовным делам. М.: Изд. Юрлитинформ, 2005. 184 с.

Булатов Б.Б., Ершов О.Г. О правовом регулировании и применении залога в уголовном судопроизводстве // Российская юстиция. 2012. № 7. 36-40 с.

Тутынин И. Б. Теоретические основы уголовно-процессуального принуждения имущественного характера: монография. М.: Изд. Юрлитинформ, 2022. 352 с.

Царева Ю. В. Залог как мера пресечения в уголовном процессе России: доктрина, юридическая техника, правоприменительная практика: автореф. дисс. ... канд. юрид. наук. Н. Новгород, 2018. 24 с.